ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 221 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Կերոն» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02907265) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի փետրվարի 9-ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի գրադարանի վերակառուցում և կահավորում» ծրագրի մասին» N 46-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Օպթիմայզ Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03563538) 2026 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 2026-03-25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում ֆինանսական կառավարման ծառայությունների մատուցում՝ ամսական 218,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Քիսթոուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00928694) 2026 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 06-250326 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում իրավաբանական-խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ ամսական 317,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Դի-Էս-Էյ խորհրդատվական խումբ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00224571) 2026 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 26/05/-37 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 1-ից մինչև 2027 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում հարկային և հաշվապահական աութսորսինգային ծառայությունների մատուցում՝ ամսական 167,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ